23 հունվարի 2020 թվականի N 49 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1225-Ն որոշման պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԱՆԻԹԵՔՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ապրանքների ներմուծման դեպքում մաքսային և հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 468-Ա որոշման հավելվածի ցանկում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 21-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-36-րդ կետերով.

«

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 22. | 9606 | Պլաստմասսայե կոճակներ | կգ | 200 | 3 000 000 |
| 23. | 5604 | Ռետինե թել | կգ | 2 000 | 5 000 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 24. | 5808 | Հյուսած ժապավենաթել՝ կտորով | կգ | 150 | 2 250 000 |
| 25. | 5808 | Հյուսած ժապավենաթել՝ այլ | կգ | 150 | 2 250 000 |
| 26. | 3920 | Պլաստիկ թաղանթ պիտակների տպագրման համար | կգ | 300 | 3 000 000 |
| 27. | 3207 | Պատրաստի գունանյութ պիտակների տպագրման համար | կգ | 100 | 1 500 000 |
| 28. | 5807 | Պիտակներ՝ տպված | հատ | 100 000 | 3 000 000 |
| 29. | 5807 | Պիտակներ՝ գործած | հատ | 150 000 | 6 000 000 |
| 30. | 3923 | Պլաստմասսայե տուփ՝ փետուրե արտադրանքի վրա կարելու համար | հատ | 75 000 | 18 750 000 |
| 31. | 5903 | Քաթան նրբախավով՝ բամբակե մանվածքից | մ$^2$ | 155 000 | 113 150 000 |
| 32. | 6001 | Քաթան նրբախավով՝ քիմիական թելերից | մ$^2$ | 400 000 | 292 000 000 |
| 33. | 5309 | Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% բաժին կամ ավելի պարունակությամբ - սպիտակեցրած | մ$^2$ | 400 000 | 600 000 000 |
| 34. | 5309 | Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% բաժին կամ ավելի պարունակությամբ - այլ | մ$^2$ | 400 000 | 600 000 000 |
| 35. | 5309 | Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% պակաս պարունակությամբ - սպիտակեցրած | մ$^2$ | 400 000 | 600 000 000 |
| 36. | 5309 | Վուշի գործվածք՝ վուշի մանրաթելերի 85% պակաս պարունակությամբ - այլ | մ$^2$ | 400 000 | 600 000 000 |

».

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «8 654 831 000» թիվը փոխարի-նել «11 504 731 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2020 թ. հունվարի 23
Երևան